

Քրիստոնեայ՝ ամէնքն ալ յարգեցին զինքը ու  
 ակնածեցան իրմէ: Չորս տարւան մէջ պարտքերը  
 վճարելու համար իր երաշխաւորութիւնը յար-  
 գուեցաւ: Երուսաղէմի Փաշան «կարի հաւանեցաւ»  
 Կոլոտի կարգադրութեան, գրեց Պոլիս Սուլթան  
 Մահմուտ կայսեր եւ իր համարումն ու գնահա-  
 տումն ալ արտայայտելու համար՝ ինչոյեց հայոց  
 վանքին Աթոռակալը:

Կոլոտ չչլացաւ այս առաջին յաջողութիւն-  
 ներէն, եւ կատարելապէս գիտակից իրաց վիճակին,  
 այս փառքերու մէջ ուղղակի Ս. Յարութիւն գնաց,  
 գոհութիւն մատուցանելու Աստուծոյ եւ աղօթ-  
 քով զօրացնելու իր հաւատացեալի սիրտը: Արտի  
 այս ըզձանքը գոհացրնելէ ետքը՝ ուղղակի Ս. Յա-  
 կոբ գնաց, ժողովեց միաբանութեան կարող ան-  
 դամները, որոնց մէջ եւ միշտ Կոլոտի հետն էր  
 Հաննէ պատմիչն ալ, եւ անոնց խորհրդով իբր  
 առաջին եւ հիմնական կարգադրութիւն՝ փշուր  
 փշուր բրաւ հասարակաց կնիք, որուն վրայ գրուած  
 էր «անուն Սրբոյ Աթոռոյս»: Այդ կնիքով, որ  
 «Օրինչ կնիք» կամ ըստ Կոլոտի «Կնիք պարտոց»  
 կ'ըսուէր, Պոլսէն զրկուած Ալէքիւներ իբր թէ յա-  
 նուն վանքի փոխառութիւններ կ'ընէին, բայց  
 իրապէս իրենց պէտքերուն կը մնիէին:

Պալլքէսէրցին, կ'ըսէր Կոլոտ, «անէր  
 զնոյն կերպ չար ագահութեամբ քան զառաջինս.  
 Վասն որոյ զրեմիէ կնիք այն կնիք պարտոց  
 յարտոցն:»

### ԵՐԿՈՒ ԱԹՈՐՆԵՐՈՒՆ ԲԱՓԱՆՈՒՄԸ

«Եւ թէպէտ չէր ասորք մեզ այս  
 գործ, բայց ասպ յանձն. զի բաժա-  
 նեացի Երուսաղէմայն պատրիարքութիւն  
 ի Կոստանդնուպոլսոյ, որ եղև իսկ  
 Տեառն յաջողմամբ:» (Կոլոտ:)

Կոլոտ Ս. Յակոբը ազատագրելէ ետքը պար-  
 տատէրներու շահատակութիւններէն՝ Պոլիս վե-  
 րագարձաւ: Առանց կարեւորութիւն տալու այն-